ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 հունիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

95
(2761)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՆՉԵԼ ԵՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ. ԴԵՌ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծանուցումը հասել է ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանին, սակայն նա դեռեւս չի ներկայացել նախաքննական մարմին: Տեղեկացանք, որ Արսեն Թորոսյանը, որն օրումեջ հայտարարում էր, թե պահանջում է իրեն հարցաքննեն, հիմա էլ չի ներկայանում ՀԿ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պատգամավորը քննիչի հետ հարմարեցնում է իր հարցաքննության օրն ու ժամը, որպեսզի ներկայանա, ու գործընթացը երկարում է դեռ:

Հիշեցնենք, որ դեռեւս անցած տարի՝ նոյեմբերի 22-ին, «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահ համակարգում ներքին քննարկում է եղել՝ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին Հակակոռուպցիոն կոմիտեն պետք է հրավիրի հարցաքննության:

Ասել է թե՝ նախաքննական մարմինը պատրաստվել է ծանուցում ուղարկել Արսեն Թորոսյանին, սակայն իրավապահ համակարգում գնահատական է հնչել, որ նրան մեղադրանք առաջադրելու պահը դեռեւս չի հասունացել: Արդեն իսկ քրեական գործով մի շարք ուշագրավ հանգամանքներ են ի հայտ եկել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս օրերին Հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվ կերպով հարցաքննության է հրավիրում «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի աշխատակիցներին: Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը: Ըստ քրեական վարույթով ձեռք բերված տվյալների՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Հիշյալ ծրագրի շրջանակում ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. հրամանով՝ հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության՝ «COVID-19»-ի ախտորոշման եւ բուժման դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացող, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը, որում ներառվել է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությունը:





«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար կենաց-մահու հարց է դարձել Երեւանում իշխանություն պահելը. անվտանգային ու մյուս բոլոր հարցերը թողած՝ ողջ ռեսուրսով լծվել են ավագանու ընտրությունների նախապատրաստական աշխատանքներին: Ինչպես հայտնի է, ՔՊ նախընտրական շտաբը ավագանու ընտրություններում գլխավորելու է Արմեն Փամբուխչյանը, որն այսօրվանից առանց աշխատանքի է մնում, քանի որ գլխավորած ԱԻ նախարարությունն այսօրվանից լուծարվում է. ՔՊ գլխավոր շտաբը Հյուսիսային պողոտայում է գտնվելու: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հիմա էլ իշխանականների համար օրակարգային է շտաբի պետի տեղակալներ գտնելու հարցը, որոնք Արմեն Փամբուխչյանին կօգնեն նախընտրական քարոզարշավը կազմակերպելու եւ համակարգելու ծանր աշխատանքում: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ականները փորձում են գտնել մի թեկնածուի, որը կկարողանա հարկ եղած դեպքում ՔՊ-ականներին հավաքել շտաբում, ում խոսքը լսելի ու ազդեցիկ կլինի թիմում բոլորի համար: Ինչպես մեր աղբյուրները փոխանցեցին՝ այս հարցում կարեւոր է հատկապես Տիգրան Ավինյանի «դաբրոն», որը շատ բծախնդիր է ամեն հարցում: Մեր տեղեկություններով՝ առաջիկայում ՔՊ-ում արդեն ավարտին կհասցնեն նախապատրաստական ողջ աշխատանքները ու կսկսեն քարոզարշավին պատրաստվել:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը 2020 թվականի օգոստոսին բնակարան է գնել Արաբկիր վարչական շրջանում: Նա հանդիսանում է այդ բնակարանի միանձնյա սեփականատերը: Նա, սակայն, ներկայացրել է նաեւ երկու բնակարան, կրկին՝ Արաբկիրում, որը 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք է կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն: Պատգամավորը շարժական գույք չի հայտարարագրել: Պաշտոնական փաստաթղթերից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բանկային հաշվին առկա նրա դրամական միջոցները տարվա ընթացքում տատանվել են. տարվա սկզբում նա մի հաշվին 0 դրամ է ունեցել, որը տարվա վերջ դարձել է 933 հազար դրամ, իսկ 877 հազար դրամից էլ մնացել է 2 հազար դրամ: Առձեռն հայտարարագրած 8 մլն 500 հազար դրամը տարվա վերջում դարձել էր 11 մլն դրամ: Նրա միակ եկամուտը եղել է պատգամավորական աշխատավարձը՝ 8 մլն 234 հազար դրամի չափով: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ 30 մլն 935 հազար դրամ է կազմել: Հակոբյանի հայտարարագրած միակ ծախսը եղել է 3 մլն 169 հազար դրամը, որը ծախսվել է վարկերի մարման համար:



Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը երեկ ԱԺ-ում փակ հանդիպում է ունեցել Արցախի պատգամավորների հետ.հանդիպումը տեւել է մոտ 2 ժամ: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել Հարությունյանի եւ Արցախի պատգամավորների փակ հանդիպումից: Տեղեկացանք, որ հանդիպման ժամանակ քննարկվել են անվտանգային հարցեր, ինչպես նաեւ օրենսդրական նախագծեր, նախագահը ներկայացրել է 2022 թվականի ծրագրի կատարման ընթացքը, ինչպես նաեւ պատասխանել է պատգամավորների հարցերին: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի Արցախի աղբյուրներն են հայտնում, Արայիկ Հարությունյանը բավականին ընկճված է եղել, անորոշ ու ոչ հուսադրող հայտարարություններ է արել Արցախի հետագա ճակատագրի, ճանապարհների շրջափակման մասով: Արայիկ Հարությունյանը մասնավորապես ասել է, որ իրենց ձեռքում ոչինչ չկա, պետք է պայքարեն, իրենց ձայնը բարձրացնեն, բայց խնդրի լուծման բանալին իրենց ձեռքում չէ: Պատգամավորները Հարությունյանից հետաքրքրվել են՝ տեղյակ է արդյոք՝ ինչ են բանակցում Հայաստանի իշխանությունները, կապի մեջ է արդյոք նրանց հետ: Հարությունյանը թեեւ ոչ ուղիղ, բայց հասկացրել է, որ իրեն էլ տեղյակ չեն պահում բանակցությունների մասին: Պատգամավորները Հարությունյանի խոսքից հասկացել են, որ նա էլ այլեւս ոչ մի հույս չի կապում Հայաստանի իշխանությունների հետ, Արցախի ապագան անորոշ է, պետք է հույսները միայն իրենց վրա դնեն: Ինչ վերաբերում է ռուս խաղաղապահներին, Արայիկ Հարությունյանը վստահեցրել է, որ նրանք նույնպես ցանկանում են՝ շուտ լուծվի խնդիրը, բայց, մյուս կողմից, չեն կարող ուղիղ առճակատման մեջ մտնել ադրբեջանցիների հետ. նրանց առաքելությունը խաղաղության պահպանումն է:

ԶՐՈՒՅՑ

# ՏԻՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի եւ Արցախի սահմաններին ստեղծված լարված իրավիճակի, ԱԺ՝ պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների վերաբերյալ զրուցել է ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանի հետ:**



**-Պարոն Խաչատրյան, զրույցը սկսենք ամենաառաջնային հարցերից. տեսնում ենք, որ Հայաստանի եւ Արցախի սահմաններին իրավիճակը գերլարված է, ամեն օր կրակոցներ են, ինչն էլ իր հերթին, ցավոք սրտի, պատճառ է դառնում նոր զոհերի ու տարածքային կորուստների: Ի՞նչ կասեք այս մասին: Ինչու՞ այս իրավիճակին հասանք: Ինչու՞ է հակառակորդը օր օրի ավելի լկտիանում եւ նման քայլերի դիմում:**

-Այն, ինչ ուզել է հակառակորդը, երբեք էլ գաղտնիք չի եղել: Հակառակորդը ձգտել է, որ Արցախը չունենա ինքնիշխանություն, լինի իր կազմում որպես Ադրբեջանի եւ Թուրքիայի բաղկացուցիչ մաս, ցամաքային կապ հաստատելու միջոց: Այսօր իրենք ունեն դրա մեծ հնարավորությունը: Ի՞նչ առումով: Գնահատելով իրավիճակը՝ իրենց բանակի, հնարավորությունների, հզորության, վարած հաջող դիվանագիտական քաղաքականության շնորհիվ հայտնվել են թելադրողի կարգավիճակում, եւ այն, ինչը որ իրենց ծրագրերում կա, փորձում են իրականություն դարձնել՝ անտեսելով ոչ միայն միջազգային հանրության պահանջները, այլեւ ընդհանրապես համամարդկային հումանիտար պահանջի հետ կապված խնդիրները, մեղմ ասած՝ թքած ունենալով այդ ամեն ինչի վրա: Եվ այդ ամենը, իմ պատկերացմամբ, ստեղծվել է զուտ նրա արդյունքում կամ հետեւանքով, որ մեր իշխանությունները իրենց ոչ ճիշտ դիվանագիտական մոտեցումներով, ներքին խնդիրների ոչ պատշաճ լուծումներով բերել են այնպիսի վիճակի, որ ժողովուրդը իր ինքնության, իր իրավունքների համար պայքարելու կամքից հրաժարվել է: Այստեղ պետք է ընդամենը հասկանալ, որ դա մերօրյա իշխանության վարած թույլ, անհետեւողական կամ ցածր մակարդակի քաղաքականության արդյունք է: Մեծ ակնկալիքներ ու սպասումներ ունենալ, բնականաբար, չի կարելի:

**-Չնայած սահմանային լարված այս իրավիճակին՝ Հայաստանի իշխանություններն ասում են, որ իրենց չխանգարեն, որովհետեւ իրենք գնում են խաղաղության օրակարգով: Ի՞նչ գին են վճարում Հայաստանը եւ Արցախը խաղաղության այդ օրակարգի համար:**

-Այդ հայտարարությունը իրենք շուրջ երեք տարի է՝ անում են: Ցավալին այն է, որ որեւէ տեսանելի բան չկա: Ինչ-որ բան, որը մեզ տալու է այդ խաղաղությունը, եւ դրա արդյունքում մենք ունենալու ենք հանգիստ, ստեղծագործ, բարգավաճելու համար գործուն միջավայր, չկա: Բոլորն էլ տեսնում են, որ այսօր մենք այդ եզրույթ կոչվածը, որը գցել են հասարակության մեջ՝ ուղեղները եւ մտածողությունը սահմանափակելու համար, չի գործում:

Ի՞նչ գին ենք վճարում՝ ամենօրյա զոհեր, կորուստներ, նսեմացված կարգավիճակ, ստորաքարշ կամ ստրուկի կյանք. սա է մեր վճարած գինը:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԻՐԱՎԻՃԱԿ

## ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ



ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Ազգային ժողովում հյուրընկալեցի Հայաստանում Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պրն Մարիանո Վերգարային, Լրատվական եւ քաղաքական բաժնի համակարգող Մարինե Վարդանյանին:

Մարդու իրավունքների վերաբերյալ մեր քննարկման ընթացքում դեսպանը հայտնեց, որ իրենց համար մարդու իրավունքների պաշտպանությունն առաջնահերթություն է:

Այս համատեքստում գործընկերներիս հրատապ կերպով ներկայացրի Արցախում եւ Հայաստանում առկա անվտանգային իրավիճակը, որը սերտ առնչություն ունի մարդու իրավունքների հետ, եւ նշեցի, որ Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրետանային միջոցներից կրակ են բացել Մարտունու եւ Մարտակերտի հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաեւ ԱԹՍ-ներ, որի հետեւանքով հայկական կողմն ունի 4 զոհ:

Գործընկերոջս ներկայացրի Հայաստանում ժողովրդավարության սպառնալիքները, դատական համակարգում առկա խնդիրները եւ նշեցի, որ մեր երկրում դատական համակարգի անկախությունը վտանգված է:

Դեսպանը տեղեկացրեց, որ Արգենտինան մարդու իրավունքների՝ներառյալ կանանց իրավունքների, ժողովրդավարական արժեքների պաշտպանության լայն օրակարգ ունի, ուստի արտահայտեցինք մեր պատրաստակամությունը՝ ընդլայնելու համագործակցությունը՝ի շահ մարդու իրավունքների պաշտպանության:

## ԵՄ-Ն ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքն արդեն երկար ժամանակ է՝ գտնվում է Ադրբեջանական ուժերի կրակոցների, հրետակոծության տակ: Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի, Արարատի մարզերում գրեթե ամեն օր կրակոցներ են: ՀՀ քաղաքացիները ենթարկվում են հոգեբանական եւ ֆիզիկական ճնշումների, քանի որ այդ կրակոցները խաթարում են նրանց առօրյան, աշխատանքը, իսկ երեխաները հաճախ զրկվում են իրենց կրթության իրավունքից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում է ուղարկել Հայաստանում ԵՄ գրասենյակ՝ հասկանալու համար, թե ինչ-որ քայլեր ձեռնարկվում են արդյոք իրավիճակը հանգուցալուծելու համար: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինի գրասենյակից ստացել ենք հետեւյալ պատասխանը. «Մենք լիովին հասկանում ենք հայ ժողովրդի մտահոգությունները եւ այդ տեղեկությունները փոխանցում ենք Բրյուսել, որտեղ ակտիվ աշխատում ենք՝ ձգտելով հասնելու լարվածության թուլացմանը, կոչ ենք անում գնալ դեէսկալացիայի եւ աշխատել համապարփակ կարգավորման ուղղությամբ: Աշխատանքը ներառում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերելի են բռնության ռիսկի նվազեցմանը, այնպիսի հարցեր, ինչպիսիք են տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքը եւ սահմանազատումը: Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայումը եւ ամենօրյա աշխատանքը Եվրոպական միությանը հնարավորություն է ընձեռում տեղից ավելի լավ պատկերացում կազմել «հողի վրա» տիրող իրավիճակի մասին, ինչպես նաեւ տեսնել տեղի բնակչության համար դրա հետեւանքները:

*ՄԱՐԻԱՄ ՂԱՔԱՐՅԱՆ*

## ՇԵՆՔԸ՝ ԿՌՎԱԽՆՁՈՐ

Այսօր՝ հունիսի 30-ին, Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատանքի վերջին օրն է: Գերատեսչությունը հուլիսից կգործի Ներքին գործերի նախարարության կազմում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այս ամենի հետեւանքով ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը եւ նախարարության շուրջ 280 աշխատակից կմնան առանց աշխատանքի. նրանց ճակատագիրն անորոշ է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԻ նախարարության՝ Դավիթաշեն 4 թաղամասի հասցեում գտնվող մեծ շենքը կռվախնձոր է դարձել իրավապահ համակարգի վերին օղակներում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իրավապահ համակարգում թեժ պայքար է սկսվել այս շենքի համար, ուժային կառույցներն ամեն ինչ անում են, որ այս մեծ շենքն իրենց բաժին հասնի, իրենց աշխատատեղն այդտեղ տեղափոխվի:

Հիշեցնենք, որ նախարարության գործող շենքը վերակառուցել է ԱԻ նախկին նախարար Արմեն Երիցյանը 2012թ.-ին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԻՆ շենքի համար պայքարում է մասնավորապես ԱԱԾ-ն: Այս պահին երկու տարբերակ է քննարկվում. հնարավոր է, որ ԱԱԾ վերնախավը շարունակի մնալ Նալբանդյան հասցեում, իսկ մյուս աշխատակիցներն այնտեղից տեղափոխվեն Դավիթաշեն՝ ԱԻՆ շենք:

Մյուս կողմից՝ քանի որ թեժ պայքար է գնում շենքի համար, չի բացառվում, որ ԱԱԾ ղեկավարությունը հենց տեղափոխվի այնտեղ, քանի որ այն բավականին ընդարձակ է եւ հարմարավետ: ԱԻՆ շենքի ճակատագիրն այս պահի դրությամբ դեռ անորոշ է: Հնարավոր է՝ այս հարցն ընդգրկված լինի կառավարության այսօրվա նիստի օրակարգում:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## «ԹԱՆԿ Է ՆՍՏՈՒՄ» ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ

Երկարակյաց պաշտոնյա Արմեն Ղուլարյանի գլխավորած Քաղաքաշինության կոմիտեն իր գոյությամբ «թանկ է նստում» պետբյուջեի վրա: Օրինակ՝ 2022 թվականին կոմիտեին հատկացվել է 15 մլրդ 903 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 14 մլրդ 313 մլն դրամ, կատարողականը կազմել է 90 տոկոս: Օրինակ՝ 117,5 մլն դրամ հատկացվել է նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման եւ տեղայնացման ծախսերի համար, ինչն իրականացվել է 100 տոկոսով: Մշակվել է 19 նորմատիվատեխնիկական փաստաթուղթ: Միայն կոմիտեի պահպանման ծախսերի համար հատկացվել է 592,5 մլն դրամ, որն օգտագործվել է 99 տոկոսով: Այսինքն՝ այս կառույցը տարեկան 15 մլրդ է ստանում ու հիմնականում փաստաթղթեր մշակում, այնինչ մայրաքաղաքի ու մեծ հաշվով երկրի քաղաքաշինության ոլորտը բարձիթողի է:

## ԽՈՒՃԱՊԻ ԿԱՐԻՔ ՉԿԱ



«ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»-ը հայտարարություն է տարածել, որում ասվում է. «Տեղեկացնում ենք, որ այսօր խանութներում առաջացած հացեղենի արհեստական սղությունը պայմանավորված է որոշ անբարեխիղճ տնտեսավարողների հարուցած խուճապային տրամադրությամբ, որն էլ հանգեցրել է բազմաթիվ քաղաքացիների կողմից ավելորդ քանակի հացեղենի գնման եւ մնացածի համար սղության առաջացման:

Ուստի, քաղաքացիներին հորդորում ենք հացեղենի գնումները կատարել ամենօրյա կարիքին համապատասխան քանակով՝ առանց տրվելու խուճապային տրամադրությունների, քանի որ ալյուրի ծավալի խնդիր չկա, եւ որոշակի ծավալով ու պարբերականությամբ կառավարության կողմից մատակարարվում է բոլոր փուլերին: Դրան զուգահեռ պետական լիազոր մարմինն աշխատում է փուլերի հետ՝ կանխելու դրանցից որոշների անբարեխիղճ վարքը՝ նախատեսվածից ավելի ալյուր ստանալու կամ հացեղեն վաճառելու տեսքով»:

## ՆԱԽԱԳԱՀԸ ՄԵՐԺԵՑ

Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ մերժել է Նաիրի Հունանյանի եղբորը՝ դատապարտյալ Կարեն Հունանյանին ներում շնորհելու խնդրագիրը: Հիշեցնենք, որ Հունանյանը հոկտեմբերի 27-ի գործով դատապարտվել է ցմահ ազատազրկման:

## ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԱԺ-ՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունիսի 29-ին մասնակցել է Ազգային ժողովի նիստին, որի օրակարգում ներառված էր ԱՀ նախագահի 2022 թվականի ծրագրի կատարման ընթացքի եւ արդյունքների, ինչպես նաեւ 2023 թվականի միջոցառումների ծրագրի մասին հարցը:

Արցախի նախագահի աշխատակազմից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ երկրի ղեկավարը պատասխանել է ԱԺ պատգամավորների կողմից բարձրացված հարցերին, որոնք վերաբերում էին իշխանությունների ներքին ու արտաքին քաղաքականությանը եւ Արցախի շրջափակման դիմակայման քայլերին:

ՈՒՇԱԳՐԱՎ

# ԵԽԽՎ ԲԱՆԱՁԵՎԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

**Կառավարության հերթական նիստի ժամանակ՝ նախքան օրակարգային հարցերի քննարկումը, Փաշինյանը խոսել է հունիսի 27-ին Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի Մարտունու եւ Մարտակերտի դիրքերի ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերի կողմից հրետանային եւ անօդաչու ավիացիայի հարվածների մասին, որի հետեւանքով զոհվել են չորս զինծառայողներ, ինչպես նաեւ ներկայացրել Ադրբեջանի գործելակերպի վերաբերյալ ԵԽԽՎ-ի կողմից ընդունված բանաձեւի մանրամասները:**



«Կառավարության նիստի հարգելի՛ մասնակիցներ,

Սիրելի՛ ժողովուրդ,

Լաչինի միջանցքի փակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում առաջացած հումանիտար ճգնաժամի պայմաններում հունիսի 27-ին Ադրբեջանի զինված ուժերը հրետանային եւ անօդաչու ավիացիայի հարվածներ են հասցրել Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի Մարտունու եւ Մարտակերտի դիրքերի ուղղությամբ, ինչի հետեւանքով պաշտպանության բանակի չորս զինծառայող է զոհվել: Ցավակցություն հայտնելով զոհվածների հարազատներին եւ ընկերներին՝ պիտի ընդգծեմ, որ այս ռազմական սադրանքը երկար ժամանակ նախապատրաստվում էր Ադրբեջանի տեղեկատվական գրոհներով, թե, իբր, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը շփման գծի տարբեր հատվածներում խախտում է հրադադարի ռեժիմը: Ադրբեջանական լրատվության հրապարակումների մտացածին լինելը Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից հետեւողականորեն ի ցույց է դրվել, ինչի պայմաններում ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանն իրադրությունը սրելու եւ Լեռնային Ղարաբաղը հայաթափելու հետեւողական քաղաքականություն է վարում, այսինքն՝ ըստ էության, այն քաղաքականությունը, որի վերաբերյալ մենք երկար ժամանակ ահազանգում ենք: Ադրբեջանի գործելակերպն ավելի ու ավելի տեսանելի կերպով հենց այդպես է ընկալվում նաեւ միջազգային հանրության կողմից, ինչի ամենաթարմ ապացույցը նախորդ շաբաթ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ընդունված 2256 բանաձեւն է: Այդ բանաձեւի 15-րդ կետում ԵԽԽՎ-ն արձանագրում է. «Վեհաժողովը չափազանց անհանգստացած է Ադրբեջանի ղեկավարության ամենաբարձր մակարդակում հայերի դեմ կիրառվող թշնամական եւ սպառնալից հռետորաբանությունից եւ կոչ է անում Ադրբեջանին մերժել նման հռետորաբանությունն ու քայլեր ձեռնարկել ինչպես ատելության խոսքի դեմ, այդ թվում՝ հանրային եւ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կիրառվող, այնպես էլ ատելության հանցագործությունների դեմ պայքարելու համար»:

Նույն բանաձեւի 8-րդ կետում Վեհաժողովն արձանագրում է. «Ներկա անկայուն իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը ստիպված կլինի լքել իր տներն ու համայնքները: Այս համատեքստում Վեհաժողովը հրատապ կոչ է անում լուծել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքների եւ անվտանգության խնդիրները, Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ երկխոսության, ինչպես նաեւ խաղաղության իրականացման ցանկացած մեխանիզմում չեզոք միջազգային ներգրավվածության միջոցով»: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վեհաժողովն ընդգծել է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության խախտում է, արձանագրել է Լեռնային Ղարաբաղին մատակարարվող բնական գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարումների արգելափակման փաստը, Ադրբեջանին կոչ է արել անհապաղ վերականգնել այդ մատակարարումները եւ կատարել Լաչինի միջանցքն ապարգելափակելու մասին Արդարադատության միջազգային դատարանի որոշումը: Կարեւոր է արձանագրել, որ ԵԽԽՎ բանաձեւի կապակցությամբ ընդունված հանձնարարականում նույն մարմնի կողմից Լաչինի միջանցքի փակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը գնահատվում է որպես հումանիտար եւ մարդու իրավունքների ճգնաժամ, եւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ուշադրությունն է հրավիրում այդ ճգնաժամի վրա՝ ընդգծելով Լեռնային Ղարաբաղ եւ Լաչինի միջանցք հնարավորինս արագ փաստահավաք առաքելություն կազմակերպելու անհրաժեշտությունը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԵԺԿ-Ն՝ ԱՇՈՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ ⇨

Եվրոպայի Ժողովրդական կուսակցությունը՝ ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի կալանավորման վերաբերյալ.

«Խորը մտահոգություն ենք հայտնում Արմեն Աշոտյանի՝ քաղաքական դրդապատճառներով կալանավորման կապակցությամբ: Մեր համերաշխությունն ենք հայտնում Արմեն Աշոտյանին եւ իրենց ժողովրդավարական իրավունքների իրացման համար Հայաստանում հալածվող բոլոր անձանց: Եվրոպական Ժողովրդական կուսակցությունը կոչ է անում մանրակրկիտ վերանայել իրավիճակը եւ անհապաղ ազատ արձակել Արմեն Աշոտյանին»:






## ԱՐՑԱԽԻՑ ԵՐԵՎԱՆ ԵՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ

Հունիսի 29-ին ԱՀ առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 12 բուժառու ուղեկցողների հետ միասին «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

Արցախի առողջապահության նախարարությունից Ժողովուրդ օրաթերթին հայտնում են, որ նախատեսվում է օրվա ընթացքում ԿԽՄԿ մեքենաներով Արցախ վերադարձնել 15 բուժառուներ՝ ուղեկցողների հետ միասին, որոնք ուղեգրվել են ՀՀ բուժում ստանալու համար:

«Արեւիկ» բուժմիավորումում ստացիոնար բուժում է ստանում 29 երեխա, 2-ը գտնվում է Նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում: «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 79 հիվանդ, 7 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 5-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

ԻՆԸ ԱՄԻՍ ԱՆՑ

# ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՒ՞Մ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

**ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում պարզվել են Է.Ղազարյանի առողջությանը թեթեւ վնաս պատճառելու դեպքի մի շարք հանգամանքներ:**




2022 թվականի հոկտեմբերի 18-ին՝ ժամը 13:00-ին, Էդգար Ղազարյանը ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում հաղորդում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 11:15-11:30-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի Եղբայրության փողոցի 16/2 շենքի բակում երկու անհայտ անձինք հարձակվել են իր վրա, ձեռքերով եւ ոտքերով հարվածներ հասցրել մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ նույն օրը նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հատկանիշներով, որի նախաքննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում:

Նախաքննության ընթացքում կատարվել են հարցաքննություններ, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, առգրավվել են դեպքի վայրում առկա անվտանգության տեսախցիկների տեսագրությունները եւ ենթարկվել զննության: Արդյունքում քննչական գործողություններով պարզվել են դեպքի էական հանգամանքներ, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց ինքնությունը, որոնք հանդիսանում են Առինջ գյուղի 48, 37 եւ 31 տարեկան բնակիչներ: Ձեռնարկված անհրաժեշտ քննչական եւ վարութային անհետաձգելի գործողությունների արդյունքում անհատականացվել են նրանցից յուրաքանչյուրի գործողությունները, որոնց տրվել են իրավական գնահատականներ:

Այսպես, ձեռք բերված տվյալների համաձայն՝37-ամյա տղամարդը քննությամբ դեռեւս չպարզված շարժառիթով Էդգար Ղազարյանին ծեծի ենթարկելու՝ վերջինիս մարմանական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ 2022թ. հոկտեմբերի 18-ին՝ժամը 10:45-ի սահմաններում, 31-ամյա համագյուղացու հետ մեկ այլ՝ 48-ամյա համագյուղացու օժանդակությամբ վերջինիս վարած «Opel» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Երեւան քաղաքի Եղբայրության փողոցում գտնվող՝ Էդգար Ղազարյանի բնակության վայր, սպասել նրան: Նկատելով մոտեցող Էդգար Ղազարյանին՝ իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով աննկատ հարձակվել են նրա վրա, ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնել նրա մարմնի տարբեր մասերին՝ առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ եւ դիմել փախուստի:

2023թ. հունիսի 15-ին վարույթ իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ 37 եւ 31-ամյա տղամարդկանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, իսկ 48-ամյա տղամարդու նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որոնք բավարարվել են: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չբացակայելու արգելքը: Վերջիններս, որպես մեղադրյալներ, ծանուցվել են վարույթն իրականացնող մարմին ներկայանալու մասին, սակայն չեն ներկայացել:

Ձեռնարկվում են անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ նրանց, ինչպես նաեւ «Opel vectra» մակնիշի ավտոմեքենան հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու ուղղությամբ:

ԱՊՕՐԻՆԻ

# ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների, Ոստիկանության կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է բազմաթիվ անձանց ներգրավմամբ «Տելեգրամ» սոցիալական կայքի միջոցով իրացման նպատակով թմրամիջոցի ապօրինի խոշորածավալ շրջանառությամբ եւ դրանից ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր խումբ. հայտնում են Քննչական կոմիտեից:**

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քննության արդյունքում պարզվել է, որ Ա. Մանուկյանը, Կ. Մանուկյանը եւ Հ. Գալստյանը, ինչպես նաեւ ինքնությունը չպարզված մի շարք անձինք 2019թ.-ից համացանցի Telegram հեռահաղորդակցման հավելվածում ստեղծել եւ կառավարել են «N...», «Na...» եւ գրեթե նույնանուն 7 այլ առցանց խանութ-հարթակներ: Այդ հարթակներում նրանք տեղադրել են տարատեսակ թմրամիջոցների լուսանկարներ՝ քանակների, ըստ քաշերի՝ արժեքների մասին, տրամադրել են նամակագրության միջոցով ձեռք բերվող թմրամիջոցների դիմաց վճարման ենթակա գումարների փոխանցման համար նախատեսված, պարբերաբար փոփոխվող Dashcoin եւ Bitcoin տեսակի կրիպտոարժույթային դրամապանակների տվյալներ:

Արդյունքում 2019-2023թթ. ընթացքում վերոնշյալ անձինք այդ խանութ-հարթակների միջոցով տարբեր անձանց ապօրինի իրացրել են առանձնապես խոշոր չափերով «Մեթանֆետամին» եւ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, ինչպես նաեւ իրացման նպատակով ապօրինի շրջանառել են առանձնապես խոշոր չափերով «Կոկաին», «Մեթամֆետամին», «LSD», «Մարիխուանա» եւ «ՄԴՄԱ» տեսակի թմրամիջոցներ: Թմրամիջոցների ապօրինի իրացումից ստացված ֆինանսական միջոցները ընդհանուր կազմել են 1.152.734.220 ՀՀ դրամ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին Ա. եւ Կ. Մանուկյանների, Պ. Հարությունյանի եւ Հ. Գալստյանի նկատմամբ՝ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Կ. Շահբազյանի նկատմամբ՝ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, իսկ Վ. Գալստյանի, Բ. Սաքանյանի եւ Ա. Մարկոսյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Նշված անձանցից 5-ին, այդ թվում՝Վ. Գալստյանին, ներկայացվել է մեղադրանք. նրանք կալանավորվել են: Հ. Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց եւս ընտրվել է կալանքը, եւ հայտարարվել է հետախուզում: Վերջինս հայտնաբերվել է Վրաստանում եւ ձերբակալվել: Նախաձեռնվել է նրան ՀՀ իրավասու մարմիններին փոխանցելու իրավական գործընթաց:

Քրեական հետապնդման ենթարկվող մյուս երկու անձանց նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ կայացվել է վերջիններիս ձերբակալելու որոշում՝ մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ազգային անվտանգության ծառայությունը փորձաքննության է ենթարկել Արաբկիրի քննիչներին՝ հասկանալու համար, թե նրանք թմրանյութ օգտագործել են, թե ոչ: Ավելին, քննիչների հեռախոսային խոսակցություններ են լսվել, որտեղ նրանք խոսել են թմրանյութի մասին:

ԱԱԾ-ն մայիսի 31-ի գիշերը ներխուժել է ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիրի քննչական բաժին, քանի որ օպերատիվ տեղեկություններ է ունեցել, որ Արաբկիրի բաժնի քննիչները քրեական վարույթների շրջանակներում հայտնաբերված թմրանյութերն իրացնելու գործընթաց են իրականացրել կամ, այսպես ասած, վաճառք են կազմակերպել:

Հունիսի 1-ին հայտնի դարձավ, որ այդ գործի շրջանակում 3 քննիչ է ձերբակալվել: Ըստ տեղեկությունների՝ 2-ը կալանավորվել են, իսկ մեկի նկատմամբ տնային կալանք է կիրառվել: Այս դեպքից հետո քննիչներն ազատվեցին պաշտոնից, ու գործով քննությունը փակ ընթանում է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Արցախի ԱԱԾ-ն հաղորդագրություն է տարածել Ստեփանակերտի բնակչի կատարած հրապարակման ու նրան ձերբակալելու մասին:

«Սույն թվականի հունիսի 28-ին համացանցի սոցիալական ցանցերից մեկում հրապարակվել է հետեւյալ գրառումը՝ «Ստեփանակերտի խանութներում «մադե ին ադրբեջան»: Ապրի թուրքը, ռուսը եւ իրենց (չ)ինտեգրվող մեջլիսը: Ստամոքսիդներ, լափե՛ք ու լռե՛ք»:

Նշված հրապարակման կապակցությամբ իրականացված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ հրապարակումը տեղադրած օգտահաշիվն օգտագործում է ԱՀ Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, 1978թ. ծնված՝ Գ.Պ.-ն, իսկ նախաձեռնված քրեադատավարական ստուգման արդյունքում պարզվել է, որ վերջինիս կողմից տեղադրված հրապարակումից բխող հանգամանքներն իրականությանը չեն համապատասխանում:

Նույն օրը Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից, Արցախի Հանրապետության քրեական օրենսգրքի 321.4 հոդվածի եւ 236-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, հարուցվել է քրեական գործ: Գ.Պ.-ն ձերբակալված է»,- նշված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 66 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

# ԴԵՆԴՐՈՊԱՐԿԸ ԼՈՒԾԱՐՈՒՄ ԵՆ

Իջեւանի դենդրոպարկը ստեղծվել է 1961 թվականին, այն Սայադյան ընտանիքի 3 սերունդների կողմից հարստացվել է աշխարհի տարբեր կողմերից բերված հազվագյուտ, արժեքավոր ծառերով եւ թփերով: Դենդրոպարկը Իջեւան քաղաքի այցեքարտն է, Իջեւանի պատվարժան հյուրերին, զբոսաշրջիկներին տանում են այդ դրախտային անկյուն: Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունն ավերելու, այնտեղ անօրինական շինարարության հետեւանքով 2 տարի, 7 ամիս դենդրոպարկի ջրառը զրկված էր Աղստեւ գետի ոռոգման ջրից, որի հետեւանքով դենդրոպարկում չորացել են հազվագյուտ, արժեքավոր 1500 ծառ եւ թուփ, 24 000 տնկի, դենդրոպարկին պատճառվել է մոտ 4 միլիոն դոլարի վնաս: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, Աղստեւ գետի աջ ափին պատ կառուցելով, վերականգնել է գետից սնուցվող դենդրոպարկի ջրառը, սակայն հունիսի 28-ից գետի մակարդակի նվազման պատճառով դենդրոպարկը կրկին գետից ոռոգման ջուր չի ստանում: Իջեւանի դենդրոպարկի տնօրեն Մեխակ Սայադյանն այդ մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում տեսանյութ է տեղադրել, մեկնաբանություն գրել: ՀՀ քննչական կոմիտեն 2021 թվականի հոկտեմբերին հարուցած քրեական գործով Իջեւանի գինու, կոնյակի գործարանի տնօրենին մեղադրանք չի առաջադրել: Կատարված անօրինականության հետքերը թաքցնելու համար դենդրոպարկը լուծարում են: Դենդրոպակի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանը եւ դենդրոպարկի 3 այլ աշխատողներ հունիսի 21-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լեւոն Տեր-Սիմոնյանից ծանուցում են ստացել, որ օգոստոսի 20-ից Իջեւանի դենդրոպարկը լուծարվում է: Լուծարման պատճառաբանությունը հաստիքների կրճատումն է: Մեխակ Սայադյանը եւ դենդրոպարկի 3 աշխատակիցներ գրավոր դիմել են շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին, հայտնել, որ դենդոպարկի աշխատակազմի խնամքի եւ հսկողության տակ 50 միլիոն դրամ արժողությամբ տնկիներ կան, նաեւ շենքեր, բազում այլ գույք, եւ խնդրել են չեղյալ համարել Լեւոն Տեր-Սիմոնյանի ծանուցումները, այլապես իրենք ստիպված կլինեն դիմել դատարան: Նախկինում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ-ն անհիմն կերպով աշխատանքից ազատել է Մեխակ Սայադյանին, դատարան հայց ներկայացրել՝ Մ. Սայադյանի ընտանիքին պատկանող « Կանաչ Սիմֆոնիա» ՍՊԸ-ի եւ «Արգելոցապարկային համալիրի» միջեւ, դենդրոպարկի մի մասի տարածքի երկարաժամկետ վարձակալության մասին պայմանագիրը չեղյալ համարելու պահանջով, սակայն երկու դեպքում էլ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը դատարանում պարտվել է:

*ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

# ԳԵՂԱՄ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

**Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Հայաստան» դաշինքի պատգամավոր Գեղամ Նազարյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականի օգոստոսի 2-ին: 2022 թվականի հայտարարատու տարում Նազարյանը հայտարարագրել է երկու բնակարան, որոնցից մեկը՝ Երեւանի Էրեբունի վարչական շրջանում, մյուսը՝ Տավուշի մարզի Կիրանց գյուղում, ընդ որում՝ երկու բնակարաններն էլ ժառանգություն է:**



Որպես տրանսպորտային միջոց Նազարյանը հայտարարագրել է մեկ մարդատար մեքենա՝ SUZUKI մակնիշի, որը ձեռք է բերվել 2021 թվականին:

«Հայկական ժամանակ» օրաթերթի նախկին լրագրող Գեղամ Նազարյանը հայտարարագրել է 49 հազար դոլար կանխիկ գումար եւ որպես տարեկան եկամուտ հայտարարագրել է 7 մլն 885 հազար դրամ, որն աշխատանքի դիմաց վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմի կողմից:

Նազարյանի կնոջ՝ Նաիրա Նազարյանի բանկային ավանդները տարեվերջին կազմել են 5 մլն 500 հազար դրամ, իսկ բանկային հաշիվների մնացորդը կազմել է 3 մլն 120 հազար դրամ: Կնոջ կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն 400 հազար դրամ: Նշեմ նաեւ, որ կինը որեւէ եկամուտ չունի:

Գեղամ Նազարյանի որդին՝ Արմենակ Նազարյանը, ըստ հոր հայտարարագրի, հանդիսանում է «Նեոպրեսս» ՍՊԸ-ի տնօրեն, սակայն որդու հայտարարագրում այդ մասին ոչինչ չկա գրված: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն 900 հազար դրամ: Որդու եկամուտները կազմել են 1 մլն 695 հազար դրամ, որից 893 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Նեոպրեսս» ՍՊԸ-ից, իսկ 802 հազար 276 դրամը աշխատանքի վարձատրություն է Երեւանի Էրեբունի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցից:

Հավելենք նաեւ, որ Նազարյանի որդին՝ Արմենակ Նազարյանը, «Նեոպրեսս» ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսանում 2023 թվականի փետրվարի 21-ից: Ընկերությունը Top-news.am լրատվական կայքի պատասխանատու կազմակերպությունն է:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարություն աճուրդի մասին (1)**

2023 թ. հուլիսի 18-ին ժամը 12:00-ին պարտապան Գրիգոր Ավանեսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Գրիգոր Ավանեսյանին պատկանող գույքի աճուրդը՝ 1 ԼՈՏ 4 ենթալոտով , բաց դասական եղանակով:
Գույքն իրենից ներկայացնում է՝
ԼՈՏ 1, ենթալոտ 1. Ոսկյա կուլոն 1 հատ, իրի զանգվածը 3.5 գրամ է, հարգը 580:
Մեկնարկային գինը կազմում է 45,360 ՀՀ դրամ:
ԼՈՏ 1, ենթալոտ 2. Ոսկյա շղթա 4 հատ , իրերի զանգվածը 75 գրամ է, հարգը 580:
Մեկնարկային գինը կազմում է 972,000 ՀՀ դրամ:
ԼՈՏ 1, ենթալոտ 3. Ոսկյա ականջօղ 6 հատ , իրերի զանգվածը 20 գրամ է, հարգը 580:
Մեկնարկային գինը կազմում է 285,120 ՀՀ դրամ:
ԼՈՏ 1, ենթալոտ 4. Ոսկյա թեւնոց 6 հատ , իրի զանգվածը 73.5 գրամ է, հարգը 580:
Մեկնարկային գինը կազմում է 1,012,176 ՀՀ դրամ:
ԼՈՏ 1 ընդհանուր մեկնարկային գինը կազմում է 2,314,656 ՀՀ դրամ:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.
- աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:
Մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար՝ 1% եւ 5%-ը:
Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Գրիգոր Ավանեսյանի սնանկության հաշվին՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ-ի <<Նոր Արեշ>> մասնաճյուղ 1150020800890831 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:
Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2 :
Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

**Հայտարարություն աճուրդի մասին (2)**

2023թ. հուլիսի 18-ին, ժամը 12:30-ին պարտապան Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով:
Գույքն իրենից ներկայացնում է՝
ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:
Մեկնարկային գինը սահմանվում է 846,197 ՀՀ դրամ:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472303816560000 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:
Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:
Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

**Հայտարարություն աճուրդի մասին (3)**

2023 թ. հուլիսի 18-ին, ժամը 13:00-ին <<Նոյյան Տապան>> ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի <<Յունիբանկ>> ԲԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձանց պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝
ԼՈՏ-4. ՀՀ ք. Հրազդան, Արտադրական գոտի, Գործարանային փող., թիվ 4 հասցեում գտնվող 166.08 քմ մակերեսով արտադրական բազա , 575.13 քմ մակերեսով օժանդակ շինություններ եւ 6860 քմ մակերեսով արդյունաբերական օբյեկտների համար նախատեսված հողամաս:
Մեկնարկային գինը սահմանվում է 313,663 ՀՀ դրամ:
Հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, այն կազմում է 8,520,120 ՀՀ դրամ եւ ներառված չէ գույքի շուկայական արժեքի մեջ:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով <<Նոյյան Տապան>> ՍՊԸ-ի սնանկության հաշվին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472302180490020 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:
Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:
Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԹՈՇԱԿՆԵՐ

# ՆՊԱՍՏՆԵՐԸ ԿԲԱՐՁՐԱՆԱՆ

2023թ. հուլիսի 1-ից միջին ամսական եւ նվազագույն կենսաթոշակների, ինչպես նաեւ ծերության, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը կբարձրանան:

Ըստ այդմ՝

. նվազագույն կենսաթոշակի չափը սահմանվում է 36,000 դրամ (31,600 դրամի փոխարեն),

. աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվում է 24,000 դրամ (21,000 դրամի փոխարեն),

. զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը սահմանվում է 1,750 դրամ (1,600 դրամի փոխարեն),

. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը՝

1) ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 50,600 դրամ (46,000 դրամի փոխարեն),

2) ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 41,400 դրամ (36,000 դրամի փոխարեն),

3) ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով (3-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 38,000 դրամ (33,000 դրամի փոխարեն),

. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 38,000 դրամ (33,000 դրամի փոխարեն), իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի դեպքում՝ 120,000 դրամ (90,000 դրամի փոխարեն):

Հուլիսի 1-ից ծերության, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը նույնպես կավելանան՝

. ծերության նպաստի չափը՝ 36,000 դրամ (31,600 դրամի փոխարեն),

. ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 39,000 դրամ (31,600 դրամի փոխարեն),

. ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 37,500 դրամ (31,600 դրամի փոխարեն),

. ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով (3-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 36,000 դրամ (31,600 դրամի փոխարեն),

. կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը՝ 36,000 դրամ (31,600 դրամի փոխարեն):

Կառավարության ծրագրի համաձայն՝ պետական կենսաթոշակների չափերը մինչեւ 2026 թվականը պարբերաբար կբարձրացվեն. նվազագույն կենսաթոշակի եւ կենսաթոշակի միջին չափերը համապատասխանաբար կհավասարեցվեն պարենային եւ սպառողական զամբյուղների արժեքներին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ.

Յունիվերսալ Քլոզըս ՓԲԸ

ՅՔ UNIVERSAL CLOSURES

ք. Երևան, Նալբանդյանի փող. 29շ 36բն.

ՀՎՀՀ 02669212
հեռ 093401388
011777730

ԳՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ TC-01/2023 UC

*ք. Նոր Հաճն. Ա. Հարությունյան 1/1 շենքի վերակառուցման եվ արդիականացման, շինարարության իրականացման խոշորացված նախահաշիվ*

### ՀՐԱՎԵՐ

Հարգելի գործընկեր,

Հայտնում ենք, որ մեր ընկերության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել կատարել վերանորոգման, վերակառուցման աշխատանքներ ք. Նոր Հաճն, Ա. Հարությունյան 1/1 հասցեի արտադրամասում:

Ներկայացվում է գնման առարկայի/ծառայության/աշխատանքի տեխնիկական բնութագիրը՝

| | Անվանում | չափման միավոր | քանակ | միավոր արժեք | գին առանց ԱԱՀ | Գին ԱԱՀ-ով |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բետոնի նախաշերտի պատրաստում, հատակի տակ մինչև 10սմ հաստությամբ, բետոնի նախաշերտի և հիմքերի, կարկասի և հեծանների իրականացում, հեծանի, ամրանի կառուցում, շինաքարի շարվածք, սև մետաղական ծապավենների, անկյունակի և շվելերի տեղադրում /հոսքագծի սարքավորումների հիմք/, հատակի բետոնացման և հղկման աշխատանքներ | մ2 | 2 250 | 27 750,0 | 62 437 500,0 | 74 925 000,0 |
| 2 | Ներքին պատերի ց/ավազե սվաղ, շաղախ, ներկման համար նյութ+հավաքում+մաքառկա+աշխատանք, լուսատուների և վարդակների իրականացում, զուգարանակոնքի և լվացարանների տեղադրում, մոնտաժային խողովակների իրականացում/ | մ2 | 2 100 | 14 833,3 | 31 149 993,0 | 37 379 991,6 |
| 3 | Պրոֆիլ.պատուհանների տեղադրում, երկաթյա կարկասների փոխարինում, ներկում | մ2 | 350 | 31 083,3 | 10 879 165,5 | 13 054 998,6 |
| 4 | Առաստաղի իրականացում, սև մետաղ ծապավեն և պրոֆիլներով իրականացում, պաղպեսնոյ+պրոֆիլ+աշխատանք | մ2 | 2 400 | 9 250,0 | 22 200 000,0 | 26 640 000,0 |
| 5 | Տանիքի ստորին հատվածի լուսամուտների փակում պրոֆնաստիլով | մ2 | 340 | 8 000,0 | 2 720 000,0 | 3 264 000,0 |
| 6 | Բարձր ճնշումային օդային համակարգի, ազոտային համակարգի, դեմիներիզացված ջրի ենթակառուցվածքի և հոսքագծի տեխնիկական պահանջներին բավարարող սառեցման և հովացման համակարգի, յուղի զտիչների և յուղի ճնշման համակարգերի իրականացման աշխատանք, ներառյալ հովացման և ջեռուցման իրականացում | մ2 | 2 250 | 23 700,0 | 53 325 000,0 | 63 990 000,0 |
| 7 | Կոմունալ, ջուր+կոյուղի անցկացման աշխատանքներ | | | 1 800 000,0 | 1 800 000,0 | 2 160 000,0 |
| 8 | Լուսավորության իրականացման աշխատանքների, կետերի հաշվարկով, լուսատու + նյութ+աշխատանք | հատ | 120 | 10 500,0 | 1 260 000,0 | 1 512 000,0 |
| 9 | Էլեկտրաֆիկացում, գլխավոր էլ վահանակի կառուցում, մինչև 1000կՎԱ նոր ենթակայանի կառուցում, հոսանքի կաբել+մոնտաժ+անջատիչներ, ներքին բարձրավոլտ և ցածրավոլտ լարերի իրականցում, պաշտպանիչ էլ համակարգի հավաքում, լարման տրանֆորմատորային համակարգի համապատասխանեցում 400Վ լարման ապահովման համար | մ2 | 2 250 | 11 666,7 | 26 250 007,5 | 31 500 009,0 |
| 10 | Սենյակներ, սանհանգույց+ընդունարան+պահեստային սենյակների իրականացում | հատ | 9 | 1 250 000,0 | 11 250 000,0 | 13 500 000,0 |
| 11 | Սանիտառա-հիգիենիկ պայմանների ապահովվում+ սանպռոպուսկ+ տուռնիկետ+ միջատասպան+ հակահրդեհային միջոցներ+այլ ISO ստանդարտով պահանջվող նվազագուն պայմանների իրականացում | մ2 | 2 250 | 5 832,6 | 13 123 350,0 | 15 748 020,0 |
| 12 | Շինության արտաքին պատերի երեսպատում պրոֆնաստիլով, նյութ+աշխատանք | մ2 | 500 | 10 410,0 | 5 205 000,0 | 6 246 000,0 |
| 13 | Նոր ճանապարհի կառուցում/ասֆալտապատում 400մ2 + բակային հատվածի բարեկարգում | մ2 | 800 | 10 500,0 | 8 400 000,0 | 10 080 000,0 |
| 14 | Դարպասներ | հատ | 2 | 1 250 000,0 | 2 500 000,0 | 3 000 000,0 |
| 15 | Այլ ծախսեր/ սենյակների կահավորում, անվտանգության լրացուցիչ տեսախցիկների տեղադրում, ջրի բաքի տեղադրում/ | | | 5 550 000,0 | 5 500 000,0 | 6 600 000,0 |
| | **Ընդամենը՝ ՀՀ դրամով արտահայտած** | | | | **258 000 016,0** | **309 600 019,2** |

Խնդրում ենք սեղմ ժամկետներում ներկայացնել մեր կողմից ուղարկված տեխնիկական բնութագրի վերաբերյալ Ձեր գնային առաջարկը ներառելով կազմակերպության անվանումը, տնօրենի անուն ազգանունը, ՀՎՀՀ և հեռախոսահամարը:

Կցվում են տարածքի լուսանկարները, տեղազննության իրականացման համար կարող եք մոտենալ յուրաքանչյուր օր ժամը 09:00-ից 18:00-ն /հեռ 095376292 – Հայկ Կարապետյան /գլխ. ճարտարագետ/, հեռ 093401388 Վահան Բաբաջանյան /տնօրեն//:

Հարգանքով՝

Տնօրեն Վ. Բաբաջանյան

23.06.2023թ.



## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Հալիձոր թաղամաս, 16 շենք, 19 հասցեում գտնվող 70 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10820000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, Եղվարդ ք., Ե. Չարենցի փողոց, 39 հասցեում գտնվող 349,8 ք.մ. բնակելի տան, 18,3 ք.մ. թոնրատան, 37,5 ք.մ. ավտոտնակի, 16,9 ք.մ. /9,4 խ.մ./ պարսպի եւ 0,0917 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝36500000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 17.08.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Կենտրոն, Ռոստոմի փողոց, 29 շենք, 63 հասցեում գտնվող 106,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝32828875 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 17.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 17.08.2023թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

# ՅՈՒՆԵՍԿՕ-Ն ՆՇՈՒՄ Է ՇՆՈՐՀԱԼՈՒ 850-ԱՄՅԱԿԸ

**Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, հունիսի 28-ին կայացել է Ներսես Շնորհալու 850-րդ տարելիցին նվիրված եզրափակիչ միջոցառումը՝ «Հովեր» երգչախմբի համերգը:**




Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, համերգին ներկա էին ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրված դեսպաններ, հրավիրված հյուրեր, Ֆրանսիայի գիտական շրջանակների ներկայացուցիչներ, քույր եկեղեցիների հոգեւոր հայրեր:

Ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Էդուարդո Ֆիրմին Մատոկոն, ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար Քրիստիան Տեր-Ստեփանյանը: Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Հոգեշնորհ Տ. Ասողիկ աբեղա Կարապետյանը միջոցառման մասնակիցներին փոխանցել է Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի խոսքը:

Ողջունելով ներկաներին՝ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ Սուրբ Ներսես Շնորհալին իր անփոխարինելի տեղն է զբաղեցնում հայոց միջնադարի հոգեւոր պատմության մեջ.

«Չափազանց հարուստ, բազմաժանր ու բազմաբովանդակ է Շնորհալու գրական ու աստվածաբանական ժառանգությունը: Շնորհալին հայ քնարերգության մեջ մի շարք ժանրերի հեղինակ է եւ ամենամեծ շարականագիրն է: Ներսես Շնորհալին հեղինակել է հարյուրավոր օրհներգեր, որոնք հարստացրել են հայ եկեղեցու պատարագների եւ ժամերգությունների երգասացությունները, կատարելագործել է հոգեւոր երգերի եղանակները, բարեկարգել եւ ճոխացրել եկեղեցական պաշտոներգությունը»:

Նախարարի նշմամբ՝ Հայրապետին նվիրված այս արարողությունն ավելին է, քան հանդիսությունը: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ներկայիս աշխարհաքաղաքական մարտահրավերները, ռազմական ընդհարումների ժամանակ մշակութային համամարդկային արժեքների՝ հազարամյա կոթողների փաստացի ոչնչացումը այլ խորհուրդ են հաղորդում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների՝ 2022-2023 թվականների օրացույցում ընդգրկված Ներսես Շնորհալու հիշատակի միջոցառումներին. «Համոզված ենք, որ մշակութային, կրոնական ու հոգեւոր արժեքների անձեռնմխելիությունը պետք է բարձրագույն եւ անխախտ սկզբունք լինի բոլոր ազգերի ու պետությունների համար: Աշխարհաքաղաքական ալեկոծումները, քաղաքական հակասությունները եւ ռազմական ընդհարումները չեն կարող սպառնալիք լինել այնպիսի արժեքների համար, որոնց ստեղծումն ու պահպանումը հազարավոր սերունդների հոգեւոր սխրագործության ու հումանիստական արժեքների բարձր գիտակցության դրսեւորում են: Սուրբ Ներսես Շնորհալուն նվիրված այս միջոցառումն այնպիսի բարձր միջազգային հարթակում, ինչպիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանն է, մեզ համար ունի մշակութային ժառանգության պահպանման համընդհանուր պատասխանատվության ուղերձի նշանակություն: Ի՞նչ կմնար Ներսես Շնորհալու ժառանգությունից, եթե այդ ժառանգության հետ վարվեին այնպես, ինչպես այսօր վարվում են Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության հետ. ոչինչ »,- նշել է ԿԳՄՍ նախարարը եւ շարունակել:

Ավարտելով խոսքը՝ նախարարը շնորհակալություն է հայտնել բոլոր կազմակերպիչներին եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությանը նման հնարավորություն ստեղծելու եւ միջոցառման կայացմանն աջակցելու համար:

Միջոցառման բացման բանախոսներն արժեւորել եւ կարեւորել են Ներսես Շնորհալու ստեղծագործական ժառանգությունը, նրա դերակատարությունը համաքրիստոնեական արժեքների տարածման գործում:

Ողջույնի խոսքերին հետեւել է համերգային ծրագիրը, որը կազմված էր հայ հոգեւոր միջնադարյան շարականների, Կոմիտասի եւ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից: Երգչախումբը ներկայացրել է նաեւ եվրոպական հոգեւոր երաժշտություն: Համերգն ուղեկցվել է թեմատիկ տեսաշարով:

«ԱՄԵՐԻԱ» ԲԱՆԿ

# ԲԱՆԿԻ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է

Գ.

**Moody's վարկանիշային գործակալությունը «Ամերիաբանկ»-ի վարկունակության բազային գնահատականը (BCA) b1-ից բարձրացրել է ba3՝ վերահաստատելով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշը, եւ վերանայել է վերջինիս հեռանկարը՝ սահմանելով «կայուն»՝ նախկին «բացասականի» փոխարեն:**

Բարձրացել են նաեւ բանկի կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշը (CRR)՝ Ba3-ից դառնալով Ba2, եւ գնահատականը՝ Ba3(cr)-ից դառնալով Ba2(cr):

Այս բարելավումները պայմանավորված են մի շարք գործոններով, մասնավորապես՝ համաճարակի պայմաններում բանկի ակտիվների որակի կայունությամբ՝կապիտալի համարժեքության եւ եկամտաբերության ցուցանիշների կտրուկ բարելավմանը զուգահեռ:

Moody's-ը նշում է նաեւ, որ «Ամերիաբանկ»-ը շարունակում է ապահովել կայուն ցուցանիշներ, ինչի մասին է վկայում նյութական ակտիվների շատ բարձր եկամտաբերությունը՝3.6% 2022թ. եւ 3.5% (տարեկանացված) 2023 թ. 1-ին եռամսյակի ընթացքում: Բանկը միաժամանակ ապահովել է բարձր եկամուտ նախքան պահուստավորումը, վարկավորման ցածր արժեք եւ ծախսերի արդյունավետության լավ ցուցանիշներ. 2023թ. 1-ին եռամսյակում ծախսերի եւ եկամուտների հարաբերակցությունը կազմել է 45%:

Ըստ Moody's-ի՝ 2021-2022թթ. հետհամաճարակային շրջանում «Ամերիաբանկ»-ն էապես բարելավել է իր ակտիվների որակը: Խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը 2023թ. 1-ին եռամսյակի դրությամբ կազմել է 2.5%՝նվազելով 2020թ. վերջում գրանցած 4.2%-ից: 2023թ. 1-ին եռամսյակի արդյունքներով խնդրահարույց վարկերի ծածկույթը պահուստներով գնահատվում է կայուն եւ կազմում է 80%:

Վերջին տարիներին բարձր շահութաբերության եւ վարկային պորտֆելի չափավոր աճի պայմաններում էապես բարելավվել է նաեւ «Ամերիաբանկ»-ի կապիտալի բուֆերը:

«Ամերիաբանկ»-ի երկարաժամկետ ավանդների վարկանիշի կանխատեսումը «կայուն» է եւ արտացոլում է Moody's-ի տեսակետը, ըստ որի՝ առաջիկա 12-18 ամիսների ընթացքում բանկը պահպանելու է բարձր ցուցանիշներ:

«Ամերիաբանկ»-ի վարկանիշի կանխատեսման բարելավումը հաջորդել է Հայաստանի սուվերեն վարկանիշի կանխատեսման վերանայմանը՝«բացասականից» «կայուն»:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԸՄԲԻՇՆԵՐՆ ԱՎԱՐՏԵՑԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Հունահռոմեական ոճի երիտասարդ ըմբիշները եւս երկու մեդալ են նվաճել Իսպանիայում ավարտին մոտեցող U20 տարեկանների Եվրոպայի առաջնությունում:

60 կգ քաշային Սուրեն Աղաջանյանը Եվրոպայի երիտասարդական առաջնության հաղթողի տիտղոսի համար գոտեմարտել է Վրաստանը ներկայացնող Անրի Խոզրեւանիձեի հետ եւ 1-6 հաշվով պարտություն կրելով՝ բավարարվել է արծաթե մեդալով:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ Գասպար Տերտերյանը (67 կգ) բրոնզե մեդալ է նվաճել՝5-4 հաշվով տպավորիչ հաղթանակ տանելով Ֆրանսիայի ներկայացուցիչ Մագոմեդ Գատագաեւի նկատմամբ:

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի երիտասարդական հավաքականը 1 ոսկե, երկուական արծաթե եւ բրոնզե մեդալներով ավարտեց ելույթները Եվրոպայի U20 տարեկանների առաջնությունում: Հայաստանը 4-րդն է թիմային հաշվարկում:

Թիմն առաջնությանը մասնակցում էր մարզիչներ Մովսես Կարապետյանի, Արմեն Առաքելյանի, Տիգրան Սահակյանի եւ Ժորա Վարդանյանի ղեկավարությամբ:

## ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ԴԻՐՔԵՐԸ

ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման վարկանիշային աղյուսակը:

Հայաստանի ազգային հավաքականն առաջադիմել է 7 հորիզոնականով եւ զբաղեցնում է 90-րդ հորիզոնականը:

Աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցնում է աշխարհի չեմպիոն Արգենտինան: Նրան հաջորդում են Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան եւ Բելգիան:

## ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՁԵՌՆՈՒՆԱՅՆ

Հայաստանի բռնցքամարտի տղամարդկանց ընտրանին ձեռնունայն է վերադառնում Եվրոպական երրորդ խաղերից:

Լեհաստանում ընթացող Եվրոպական խաղերի բռնցքամարտի մրցաշարում կայացան քառորդ եզրափակիչ մենամարտերը:

Հայաստանի հավաքականից նախ պարտություն կրեց Արթուր Բազեյանը՝ զիջելով բուլղար մարզիկի, այնուհետ անհաջող մենամարտ ունեցավ Գուգեն Մադոյանը եւ գերծանր քաշային կարգում պարտվեց Դավիթ Չալոյանը:

Հայաստանի հավաքականի ոչ մի ներկայացուցիչ դուրս չեկավ Եվրոպական խաղերի կիսաեզրափակիչ, որը նաեւ Փարիզի 33-րդ օլիմպիական խաղերի ուղեգիր կապահովեր մարզիկների համար:

Ավելի վաղ անհաջող էր հանդես եկել նաեւ Հայաստանի բռնցքամարտի կանանց ընտրանին: Կանանց թիմի բոլոր մասնակիցները պարտվել էին մեկնարկային մենամարտերում:

*● Հուլիսի 1-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Սերը տարիք չի հարցնում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ



## ԽՆԴԻՐՆԵՐ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ տեղեկացնել պետական համակարգում առկա խախտումների մասին:**

*Մաքսիմ Հովեյան (50 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Դիմումները կարող են ներկայացվել գրավոր՝ թղթային (առձեռն կամ փոստով) կամ էլեկտրոնային (առցանց) եղանակով:

Գրավոր՝ թղթային (առձեռն կամ փոստով) դիմում ներկայացնելու համար այցելե՛ք «Կապ ծառայության հետ» բաժնի «Քաղաքացիների դիմումների ընդունելության կարգ» ենթաբաժին եւ ծանոթացե՛ք դիմումների գրավոր՝ թղթային եղանակով ընդունման կարգին: Գրավոր՝ թղթային (առձեռն կամ փոստով) դիմում ներկայացնելու դեպքում խնդրում ենք դիմումը պարտադիր կերպով ստորագրել, քանի որ չստորագրված դիմումները Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կողմից չեն քննարկվում, ինչպես նաեւ դիմումը համապատասխանեցնել «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին:

*ՀՀ ՊՎԾ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Էլեկտրոնային (առցանց) եղանակով դիմում ներկայացնելու համար այցելե՛ք «Կապ ծառայության հետ» բաժնի «Դիմումների առցանց ընդունում» ենթաբաժին եւ ծանոթացե՛ք դիմումների առցանց ընդունման կարգին:

*Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ*

## ԱՐՁԱԿՈՒՐԴ

**ՀԱՐՑ. Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձը ե՞րբ է վճարվում:**

*Սմբատ Մելիքյան (26 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Եթե աշխատողի համար հաշվարկված աշխատավարձը սահմանված ժամկետում չի վճարվում աշխատողից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, եւ երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Երեւանում*




Երեւանի Կենտրոն վարչական շրջանի բնակիչներն ահազանգում են, որ փողոցները շարունակում են մնալ անմխիթար եւ անբարեկարգ վիճակում:

Ավելին, բնակիչները խորը մտահոգություն եւ անհանգստություն են հայտնում, որ, օրինակ, Մոսկովյան-Տերյան փողոցներում՝ մայթերի, խանութների եւ ծառերի վրա կախված բաց հոսանքալարերն այնքան ցածր են կախված, որ կարող են դիպչել մարդկանց գլուխներին, եւ եթե քաղաքացին ուշադիր չանցնի այդ հատվածներով, կարող է հոսանքահարվել, եւ տեղի ունենա անդառնալին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել




«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:


## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | |
|---|---|
| Շիրակ | +7 + 11<br>+20 + 24 |
| Կոտայքի լեռներ | +7 +10<br>+20 + 23 |
| Կոտայքի նախալեռներ | +15 + 18<br>+28 + 30 |
| Գեղարքունիք | +8 + 11<br>+19 + 24 |
| Լոռի | + 9 + 12<br>+20 + 24 |
| Տավուշ | +12 + 16<br>+23 + 27 |
| Արագածոտնի լեռներ | + 6 + 10<br>+20 + 22 |
| Արագածոտնի նախալեռներ | +14 + 16<br>+ 27 + 31 |

| | |
|---|---|
| Արարատ | +18 + 22<br>+32 + 34 |
| Արմավիր | +17 + 19<br>+32 + 34 |
| Վայոց ձորի լեռներ | + 8 + 10<br>+20 + 23 |
| Վայոց ձորի նախալեռներ | +18 + 21<br>+32 + 34 |
| Սյունիքի հովիտներ | +16 + 21<br>+32 + 36 |
| Սյունիքի նախալեռներ | +12 + 14<br>+24 + 26 |
| ԼՂՀ | +16 + 20<br>+30 + 35 |
| Երեւան | +17 + 19<br>+30 + 31 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԳ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*